# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ԵՐԱՆԻ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԹՈՂՆՈՒՄ ԵՆ ԱՐԺԱՆԻ ԳՈՐԾԵՐ»

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 23 նոյեմբերի 2000 թ.:**

Այսօր Վեհափառ Հայրապետը ներկա գտնվեց Վազգեն Սարգսյանի հիշատակին նվիրված «Ոգու փորձություն» գրքի շնորհանդեսին և իր շնորհավորանքը, գնահատանքն ու օրհնությունը փվեց գրքի հրապարակությունը նախաձեռնած ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանին, գրքի բովանդակ փիար Հրայր Հովնանյանին ու գրքի հրապարակությանը նպաստած այլ անձանց:

*«Սիրելի հայորդիք.*

*Մենք բոլորս հոգու բերկրանքով ենք գտնվում այստեղ՝ տոնելու շնորհանդեսը «Ոգու փորձություն» խորունկ անունը կրող գրքի, որը մեծարգո Տիար Գագիկ Հարությունյանի նախաձեռնողիր աշխատանքով նվիրվում է Վազգեն Սարգսյանի հիշատակին: Բերկրանք ենք ապրում, քանզի այսօր կյանք մտնող գիրքը ականատեսի գրչի վավերականությամբ ներկայացնում է մեր ժողովրդի պատմական դժվարին ուղին դեպի անկախություն: Գրքի հրատարակությունը երախտիքի խոսք է՝ հանձին Վազգեն Սարգսյանի ուղղված մեր ժողովրդի արժանավոր այն զավակներին, որոնց ջանքերով, «ոգու փորձությամբ» և կյանքով ձեռք բերվեց հայոց նոր անկախությունը, պաշտպանվեց Արցախի ազատությունը և դրվեցին հայրենի պետականության կառույցի հիմքերը: Ուրախության հետ միաժամանակ թախիծն է պատում մեր հոգին. այսօր մեր կողքին չէ գրքի հեղինակն ու հերոսը: Ընդամենը մեկ տարի առաջ նրա երիտասարդ կյանքը ցավալիորեն ողբերգական վախճան ունեցավ: Ողբերգական մեզ համար, իսկ իր համար՝ հերոսական, քանզի զոհվեց իր պաշտոնի, իր պարտքի ու պատասխանատվության իրականացման ժամանակ: Այս պահին հիշում ենք 5-րդ դարի պատմիչի խոսքերը, թե ինչպես Հայաստանի ազատության ու խաղաղ կյանքի համար 4-րդ դարում մարտնչած ու հաղթանակներ վաստակած մեր նախարարներից Մանվել Մամիկոնյանը մահվան մահճում մանկան պես արտասվում և ափսոսում էր, որ մահն ընդունում է անկողնում, երբ իր մարմնի վրա ազատ տեղ չկար թշնամիների հարվածների սպիներից: Վազգեն Սարգսյանն այդպիսի ափսոսանք ապրելու հնարավորությունը չունեցավ. մենք ենք ափսոսում, որ հասարակական մեր կյանքում թույլ տրված թերացումները թանկ կյանքեր են արժենում:*

*Արդարև, ժամանակների անհրաժեշտությամբ են ծնունդ առնում հերոսները և իրենք կերտում իրենց ժամանակը: Եվ երանի նրանց, ովքեր թողնում են արժանի գործեր, որպեսզի հետնորդները շարունակեն դրանք, ու երանի նաև նրանց, ովքեր գնահատել գիտեն այդ գործերը և իրենց հիշողության մեջ, իրենց հոգում ու սրտում արժանին են մատուցում արժանավորներին: Երախտագետ հայ ժողովուրդը միշտ հիշելու է Վազգեն Սարգսյանին, հիշելու է Հայկ Նահապետից մինչ օրս հազարամյակներով չափվող իր պատմության մեջ հայ զենքի, մտքի, կառուցող ու արեղծարար հանճարի փառքին ծառայած նվիրյալների ու քաջերի շարքում: Հիշելու է նաև այս գրքի միջոցով, որի էջերից հառնում է հայ քաջորդու կերպարը, Հայրենիքը բարօր ու շեն տեսնելու նրա երազը՝ հանուն հայրենյաց նրա գործելու կամքով, նրա նվիրումով վարակելով սերունդներին:*

*Շնորհակալ այս գործի համար Տիար Գագիկ Հարությունյանին, հրատարակիչ-բարերար Տիար Հրայր Հովնանյանին այսօր սիրով բերում ենք Մեր գնահատանքը, շնորհավորանքները և Հայրապետական Մեր օրհնությունը: Մեր աղոթքն է, որ Աստծո խնամքի ու օրհնության ներքո հաջողությամբ պսակվի հայրենակերտումի այն ճանապարհը, որի անհողնաբեկ կառուցողներից մեկն էր Վազգեն Սարգսյանը:*

*Հավերժական լույս Վազգեն Սարգսյանի անմահ հիշատակին»:*

Գրքի շնորհանդեսի առիթով իրենց գոհունակությունը հայտնեցին Գ. Հարությունյանը, Վազգեն Սարգսյանի մայրը՝ փիկին Գրետան:

Շնորհանդեսին ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, բարձրաստիճան պետական պաշտոնյաներ, պատգամավորներ, մտավորականներ: